Հավելված N104
Պետական վերահսկողական
ծառայության գլխավոր քարտուղարի
2025թ. նոյեմբերի 17 -ի N 724-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ֆինանսաբյուջետային հսկողության և ֆինանսական վերահսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիր՝ 52-24.12-Ղ2-1):

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Ծառայության ղեկավարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալներից մեկը կամ Վարչության գլխավոր վերահսկողներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մ. Մաշտոցի պողոտա 47:

2. Պաշտոնի բնութագիրը

Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) ապահովում է Ծառայության ղեկավարի կողմից տրված հանձնարարագրերի հիման վրա պետական կառավարման համակարգի մարմիններում, տարածքային կառավարման մարմիններում (մարզպետ, մարզպետի աշխատակազմ) և պետական հիմնարկներում ֆինանսական վերահսկողության իրականացումը.
2) ապահովում է Ծառայության ղեկավարի կողմից տրված հրամանի հիման վրա պետական կառավարման համակարգի մարմիններում, ֆինանսաբյուջետային հսկողության իրականացումը.
3) ապահովում է Համապատասխան վարչության կողմից Վարչությանը տրամադրված տեղեկատվության հիման վրա ստուգման հարցաշարերի և տարեկան ծրագրի կազմումը.
4) ապահովում է տեղական ինքնակառավարման մարմիններում՝ տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության կամ դրանց տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

5) ապահովում է հարյուր տոկոս պետական սեփականություն հանդիսացող իրավաբանական անձանց մոտ դրանց գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացումը.
6) ապահովում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ Հայաստանի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.
7) ապահովում է Հայաստանի Հանրապետության կամ պետական ոչ առևտրային կազմակերպության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքների կողմ հանդիսացող անձանց մոտ, իսկ գործարքի կողմ հանդիսացող անձի իրավունքները և պարտականություններն այլ անձի վերապահված լինելու դեպքում՝ վերջինիս մոտ վերահսկողության իրականացումը Հայաստանի Հանրապետության կամ պետական ոչ առևտրային կազմակերպության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքներից բխող և դրանց պայմանների կատարման նկատմամբ, բացառությամբ պայմանագրից բխող ցուցումներ տալու, որն իրականացվում է պայմանագրով Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող լիազոր մարմնի միջոցով, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց և, օտարերկրյա իրավունքին համապատասխան, իրավաբանական անձ չհամարվող կազմակերպությունների մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքների դեպքում ապահովել համապատասխան կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված (հաշվառված) մասնաճյուղի կամ ներկայացուցչության մոտ վերահսկողության իրականացումը.
8) ապահովում է պետությունից, համայնքից, պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից, պետության, համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց կամ այլ անձանց (այդ թվում՝ մարմինների) մոտ դրանց շրջանակներում կազմակերպված գնումների գործընթացների նկատմամբ վերահսկողության իրականացումը.
9) ապահովում է տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը.
10) ապահովում է պետական կառավարման համակարգի մարմինների, ինչպես նաև դրանց ենթակա կազմակերպությունների կողմից տրամադրված հատկացումների, վարկային միջոցների, փոխառությունների և նվիրաբերությունների նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը.
11) ապահովում է վերահսկվող օբյեկտների կողմից, այդ թվում՝ պետական միջոցների կառավարման կամ ձևավորման, հակաօրինական գործողությունների, չարաշահումների վտանգի կամ հնարավոր վնասների առաջացման ռիսկերի դեպքերում նշված ռիսկերի հիմնավորվածությունը պարզելու, գնահատելու կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով գործողությունները, գործարքների կատարումը, ինչպես նաև դրանց կնքմանն ուղղված ընթացակարգերը կամ գործողությունները կասեցնելու առաջարկություններ ներկայացնելը.
12) ապահովում է հանդիպակաց ուսումնասիրությունների իրականացումը.

13) ապահովում է վերահսկողության արդյունքներից բխող պահանջվող միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.
14) ապահովում է ստացված դիմումների, բողոքների կամ առաջարկությունների ըստ անհրաժեշտության հասցեագրումն իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին.
15) ապահովում է համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների համապատասխան կառույցների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ.
16) ապահովում է օրենքներով և դրանց հիման վրա Ծառայությանը վերապահված լիազորությունների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան քննիչի որոշմամբ նշանակված ստուգումների և վերստուգումների իրականացումը:

Իրավունքները՝

1) ստանալ անհատույց և ազատ հասանելիություն վերահսկվող օբյեկտում կամ դրա պաշտոնատար անձի մոտ գտնվող և իրականացվող ուսումնասիրությանն առնչվող բոլոր թղթային կամ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններին ու համակարգերին, տեղեկություններին և փաստաթղթերին.
2) պահանջել նյութեր, առարկաներ, փաստաթղթեր ու տեղեկատվություն, ապրանքանյութական արժեքների գույքագրման կատարում՝ առանց վերահսկվող օբյեկտի բնականոն գործունեությունը խաթարելու.
3) մուտք գործել վերահսկվող օբյեկտի տարածքներ՝ առանց վերջիններիս ներքին իրավական ակտերով սահմանված սահմանափակումների.
4) վերահսկվող օբյեկտներից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ Ծառայության գործառույթներին առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, տեղեկանքներ, պարզաբանումներ.
5) վերահսկողությանը մասնակից դարձնել վերահսկվող օբյեկտի վերահսկողության ենթակա ոլորտի կամ համապատասխան բնագավառի հանրային ծառայողների (վերահսկվող օբյեկտի ղեկավարի համաձայնությամբ և միայն տեխնիկական աջակցության նպատակով), ներքին աուդիտորների (տվյալ վերահսկվող օբյեկտի ղեկավարի համաձայնությամբ), մասնագետների, փորձագետների և գիտական հաստատությունների ներկայացուցիչների, ինչպես նաև կազմավորել ժամանակավոր աշխատանքային խմբեր.
6) էլեկտրոնային կամ թղթային կրիչներով հավաքել տեղեկատվություն, կատարվող հարցումների կամ օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով, ինչպես նաև առկա տեղեկատվական էլեկտրոնային բազաներին առցանց հասանելիության միջոցով ստանալ և դասակարգել հավաքված տեղեկությունները.
7) կատարել այցելություններ երևույթների, իրադարձությունների, իրողությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման և գնահատման նպատակով, բացառությամբ հանդիպակաց ուսումնասիրությունների իրականացման դեպքերի.
8) կատարել տարածքների, շինությունների, փոխադրամիջոցների, առարկաների, փաստաթղթերի, սարքավորումների (այդ թվում՝ էլեկտրոնային) հետազոտում, տեղատեսություն, որի ընթացքում կարող են իրականացվել լուսանկարահանում,

տեսաձայնագրառում, ձայնագրառում, փաստաթղթերի պատճենահանում, բացառությամբ հանդիպակաց ուսումնասիրությունների իրականացման դեպքերի.

9) կատարել ապրանքների, աշխատանքների, ծառայությունների փաստացի ձեռքբերման գների հետ համադրմանն ուղղված նույն կամ նույնանման ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, ինչպես նաև ապրանքների՝ օրենսդրությամբ սահմանված վաճառքի չափորոշիչների պարզելուն ուղղված հարցումներ կամ նախաձեռնել դրանց ձեռքբերման գործընթաց.

10) հատուկ փորձագիտական գնահատական պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտությունից ելնելով՝ նախաձեռնել փորձաքննության իրականացում՝ անհրաժեշտության դեպքում այդ նպատակով առարկաներ, փորձանմուշներ և փաստաթղթեր վերցնելու միջոցով.

11) ֆինանսական վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Ծառայության ղեկավարին.

12) Ծառայության ղեկավարին, ինչպես նաև վերահսկվող օբյեկտներին ներկայացնել արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ, ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի մասին տվյալ մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.

13) վերահսկողության արդյունքների ամփոփման, ինչպես նաև գործունեության արդյունավետության բարձրացման, առկա բացթողումների և թերությունների վերացման վերաբերյալ վերահսկվող օբյեկտներին, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում վարչապետին ներկայացնելու համար, համապատասխան առաջարկություններ ներկայացնել Ծառայության ղեկավարին և դրանց կատարման նկատմամբ իրականացնել վերահսկողություն.

14) ներկայացնել առաջարկություններ Վարչության գործառույթների շրջանակներին վերաբերող իրավական ակտերի նախագծերի և փոփոխությունների (լրացումների) վերաբերյալ:

Պարտականությունները՝

1. ամփոփել ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների, առցանց ստացվող հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով հավաքագրվող տեղեկատվությունը, համադրել վերլուծության առարկայի կամ վերլուծության ենթակա երևույթի փաստացի վիճակի հետ և արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները ներկայացնել Ծառայության ղեկավարին.
2. ներկայացնել ստուգումների և վերստուգումների արդյունքների ամփոփման և վերլուծության, թույլ տրված խախտումների բնույթին համապատասխան դասակարգման, խախտումներ ծնող պատճառների ուսումնասիրության հիման վրա համապատասխան առաջարկություններ.
3. առցանց ստացվող, հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով հավաքվող տեղեկատվությունը համակարգված ամփոփել և համադրել վերլուծության առարկայի կամ վերլուծության ենթակա երևույթի փաստացի վիճակի հետ առկա իրողությունները պարզելու և դրանց համապատասխան գնահատական տալու նպատակով.

4. ամփոփել վերահսկողության ընթացքում հավաքված տեղեկությունները, գնահատել բոլոր հանգամանքները և դրանք ներկայացնել Ծառայության ղեկավարին.
5. ստուգել ավարտված վերահսկողության արդյունքում կազմված տեղեկանքը և այն ներկայացնել Ծառայության ղեկավարին.
6. կատարված և ավարտված գործողությունների կամ դրանց փուլերի երկրորդման եղանակով ստացված արդյունքները համադրել հաշվառմամբ արտացոլված արդյունքների հետ.
7. ամփոփել պետական կառավարման համակարգի մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթներ իրականացնելու անհրաժեշտություն առաջանալու վերաբերյալ՝ այդ մասին վարչապետին հայտնելու աշխատանքները.
8. ստուգել Վարչության կողմից վերահսկողության շրջանակներում կազմված փաստաթղթերի, ինչպես նաև վերահսկողության արդյունքներն ամփոփող տեղեկանքների համապատասխանությունն օրենքին և Վարչապետի կողմից սահմանված կարգերին.
9. ամփոփել վերահսկվող օբյեկտի կողմից ներկայացված՝ ուսումնասիրության արդյունքներն ամփոփող տեղեկանքի վերաբերյալ ներկայացված կարծիքը և արդյունքները ներկայացնել Ծառայության ղեկավարին.
10. վերահսկողության արդյունքների ամփոփման, ինչպես նաև գործունեության արդյունավետության բարձրացման, առկա բացթողումների և թերությունների վերացման վերաբերյալ վերահսկվող օբյեկտներին ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի և արդյունքների մասին Ծառայության ղեկավարին պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն.
11. Ծառայության ղեկավարին ներկայացնել Վարչության առջև դրված նպատակների և գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվություններ.
12. Ծառայության ղեկավարին կամ վարչության աշխատանքները համակարգող տեղակալին պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն՝ Վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.
13. ՀՀ վարչապետին տեղեկանքներ և զեկույցներ ներկայացնելու համար՝ ամփոփել իրականացված վերահսկողության արդյունքներով վերլուծության աշխատանքների, դրանց վերաբերյալ արձանագրված խախտումների, խնդիրների, դրանց պատճառների, հանգամանքների ու հետևանքների վերաբերյալ աշխատանքները և ներկայացնել Ծառայության ղեկավարին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության կամ իրավունքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1) Առաջնորդում.
2) Աշխատակազմի կառավարում (կատարողականի կառավարում).
3) Ռազմավարական պլանավորում.
4) Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
5) Որոշումների կայացում.
6) Խնդրի լուծում.
7) Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1) Բանակցությունների վարում.
2) Փոփոխությունների կառավարում.
3) Կոնֆլիկտների կառավարում.
4) Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն.
5) Ժամանակի կառավարում.
6) Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում.
7) Ելույթների նախապատրաստում և կազմակերպում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ այլ մարմինների լիազորությունների իրականացման վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է համապատասխան մարմնի որոշակի ոլորտի խնդիրները, դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ: